ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փոքր Կոմսոմոլի 1

№ 2697-Ա « 07 » հուլիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, ինչպես նաև հաշվի առնելով քաղաքացի Նարեկ Սարգսյանի դիմումը.

1.Անկախ գնահատողի կողմից տրամադրված N-ԳԳ-001 հաշվետվության հիման վրա, Երևանի քաղաքապետարանին սեփականության իրավունքով պատկանող, դուրս գրման ենթակա գույքն ընդհանուր՝ 72600 (յոթանասուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ արժեքով, անհատույց օտարել (նվիրել) քաղաքացի Նարեկ Սարգսյանին:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վ.Արևշատյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ